ժարությունը, կպա պարսպի շինությանը նրա առաջնորդությամբ: Եվ մինչդեռ նա այս բարեգործության վերակացությամբ էր զբաղված, մոտեցավ նրա կյանքի վախճանը, և մանկահասակ՝ հող իջավ, իսկ նրա փոխադրումը (մահը) անմխիթար սուգ եղավ մեզ համար: Եվ ես՝ Նանաս, նրա սիրուց աղեխարշ ինձ համար սփոփանքի այս հնարը գտա՝ այս փոքր հիշատակը նրա գերեզմանի վրա հաստատեցի, որպեսզի նրա հիշատակը անմոռանալի լինի Աստծու առջև և անվախճան նրա որդիական սերը: Արդ՝ Նոր Սիոնի ով մանուկներ, սիրով ու ցավակցությամբ հիշեցեք անժամանակ փոխադրվածին՝ ամեն շնորհներով օժտված Մարգարեին, որպեսզի պայծառ ու զվարթ երեսով տեսնի Քրիստոսին և մեր հավատարմությունը Սուրբ Կարապետի դռան վերաբերությամբ և հանդերձյալում Աստծու առջև անխախտ մնա. ամեն:

Տաճարի հարավային որմին

Բարերար Աստծու Հոր և Որդու և սուրբ հոգու կամքով ես՝ Թեոդոսս, Չրքին մականունով, իշխանաց իշխան՝ որդի անբերդցի Քրտին իշխանաց իշխանի, Տայիրի որդու անբերդեցի Քրտի Որդիս, արի և քաջ Վաչեի որդի մեծ Քրտի թոռս, այս հաստատուն արձանագրությունը գրեցինք և տվինք մեր պապերից (մնացած) արդար գանձագնով գնված կալվածքը Սերկևիլի հանդից մինչև Սուրբ Կարապետ ու Սուրբ Կաթողիկեն, ուր իր դամբարանն է դրել իմ հայր պարոն Այրարատը՝ տեր Խոռն Կարծակովից Գուբանավի գլխով, որ ճանապարհն է դեպի Գուբբայիս Սերկևիլի ծովը Սաչնի գիծը և կավանոցը Սուրբ Կարապետի կալվածքներն են, այս իմ տված հանդերը Սերկևիլի հանդից էլ հենց հաստատ Սուրբ Կարապետի կալվածքն է:

Եվ ես Խվանդ Խաթունս՝ անբերդցի Քրտի կինս, Չրքինի և Թայիկի մայրս, կրկին հաստատեցի վերոգրյալները:

Միաբանները խոստացան ամեն տարի քառասուն անգամ պատարագել Քրիստոսին տարի առ տարի: Արդ՝ եթե իմոնցից կամ օտարներից մեկնումեկը ջանա մեր ընծան Սուրբ Կարապետից առնել, այդ մարդը նզովվի Աստծուց, երեք Սուրբ ժողովներից: Հուդայի և Կայենի բաժինն առնի և մեր մեղքերին պարտական մնա: Գրությանս կատարողները թող Աստծուց ու սրբերից օրհնվեն:

Գավթում արևելյան որմին

Աստծու ողորմությամբ ես՝ Վախթանգի որդի և Ջալալի եղբայր Զաքարիաս և իմ կին Վասակի դուստր Խորիշահը համաձայնվեցինք այս Սուրբ ուխտի հետ և գնեցինք Աշտարակի Նորքը (Նորատունկ այգիները) և տվինք սրբերին, և սրանք խոստացան վեց օր ժամ՝ Թեոդոս թագավորի տոնին: Ով խափանի, թող Տիրոջից դատվի:

Գավթում արևմտյան որմին

Հանուն Աստծու ես՝ Երևանի տեր Հուսիկս և ին կին Սոլթան Խանումը համաձայնվեցինք և տվինք մեր արդար գանձագին հայրենի այգին Սուրբ Կարապետի դռանը: Ապա սպասավորները խոստացան մի տարում չորս պատարագ՝ երկուսը ինձ համար, երկուսը՝ իմ կողակցի: Ով խափանի, Կայենի վարձը առնի. ամեն:

Տաճարում ավանդատան գլխին

Ես՝ Թայիկս, իմ այգին, որ (կոչվում է) Աթաբեկենց, տվի սրբերին, իսկ սրանք նշանակեցին տարին ութ օր ժամ (պատարագ) Բարսեղի տոնին՝ երկուսը ինձ, երկուսը Կիմաթի, երկուսը Մխիթարի, երկուսը Աթարիկի համար: Ով չանի, Քրիստոսի կողմից դատապարտվի:

Տաճարում հյուսիսային որմին

Աստծու օգնությամբ ես՝ մեծ Ռուփին քահանայի աշակերտ Մխիթարս, իմ այգին, որ Տանձուտն է, տվի Սուրբ ուխտին, և սրա սպասավորները տարին չորս օր ժամ-պատարագ սահմանեցին Սուրբ Հակոբի տոնին՝ մեկը ինձ, մեկը Խաչիկի, մեկը Ռատինիկի, մեկը Գինեվարդի համար: Ով չանի՝ երեք հարյուր տասնութ հայրապետներից նզովվի:

Տաճարում հարավային որմին

Անմահ Աստծու հույսով ես՝ Ավագ պարոնի և Թաքան Խաթունի դուստր Ջանխաթունս, համաձայնվեցի Սուրբ Կարապետի հետ, տվի իմ կես այգին, որ Խութուխտից գնել էի Ուսուփանց փոխարեն:

Եվ տեր Համազասպը և միաբանները խոստացան տարեկան 4օր ժամ (պատարագ) Թեկղեի տոնին: Քանի կենդանի ենք իմ մոր